


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՖճ.
Վ. Երևանոյ Կ. Պոլսոյ 4 ՄՖճ.
Վ. Երևանոյ Կ. Պոլսոյ 3 ՄՖճ.
Շանուշեան տոգը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսը բաց ի կրկնեցաւ ամբողջն ուրիշ առած երկու ամբողջութիւններն ետ տալու պարտաւորեցան, և կը խորհէին ինչպէս կանոնաւոր պաշարման ներքեւ գնել, բայց ահա այս ալ ի գերեւ ելաւ Եւթիքէթ փաշային մէկ հեռագիրը ծանոց թէ պաշար և ռազմամթերք տանող կայսերական զորաբաժինը ճանապարհին վրայ գլաւ նուաժ թշնամոյն յաղթելով Բէյլա հասեր է, և աւրուած հեռագրական թերթը կը վերանորոգին և Ս. յապէս Բէյլայի պաշարման մէջ ալ Ռուսը անկարող գտնուեցան, և այս ալ իրենց համար մեծ պարտութիւն մը կը հաւարուի :

Մէհմէտ Ալի փաշայի բանակէն տակաւին նոր լուր մը չկար. բայց Ռուսիոյ թափառաւորը Լոմի գծէն Պիէլա քաղաքէն ետեւ պատրաստութիւն կը տեսնէր Օսմանեան զորաց զինամարտը ։ Գուցէ Ռուսը Բէյլայի առջեւ պատերազմական գործողութիւնները թողլով իրենց սպառնալից ու մեծ փառքին զինամարտը ձեռնարկէր, այն է Մէհմէտ Ալի փաշայի յարձակումը վանելու ջանն ։ Բայց փառքը մէկ կամ երկու քէ. Սիւլէյման փաշան ալ անդու անգագար Շիբկայի մէջ իրենց բանակը գերքը կը ռմակածէ, Եւթիքէթ փաշան ալ Օրխանիէի կողմը քառասուն և հինգ վաշտէ բաղկացեալ բանակ մը կը կազմէ, որ գուցէ Լոմիան ետ առնու Ռուսերէն, որք արդէն իրենց թըր նովայի զորաբանակը Պիէլա տանելու հարկադրելով բաւական տկարացած կերակին ։ Ս. յոսր Ռուսը, յաղթութեամբ քաջալերեալ Օսմանեան զորաց բանակներէ շրջապատուած են, և եթէ Պիէլայի մէջ յաղթութիւն, գէպ ի Գաւառի պիտի միտնէր, կամ մինչև ի Ռուս մանկա Երկու ամիս առաջ Կ. Պոլսոյ ճանապարհին վրայ էին, իսկ հիւսիս Պոլսոյ մէջ իրենց գերքերը պահելու համար յուսահատ ջանքեր կընէին ։

Եթէ Պրանքո-Գերմանական պատերազմին ժամանակ ալ Գաղղիացիք իրենց պարտութիւնէն ետեւ ուժ գլաւնէին և Գերմանացիները գէպ ի Ռուս գետը վանէին, այս վերջնոց առաջին յաղթութիւններն ապարդիւն պիտի ըլլային, և վերջնական յաղթութիւնը Նաբոլէոն Գ. պիտի մնար ։ Թուրքիոյ յաղթութիւններն, որ Եւրոպայի զարմանք կը պատճառեն, այսպիսի վախճան մը խիստ հաւանական կընեն ։ Կրնայ ըլլալ ուրեմն որ շատ շաւաթներ չանցած, յարձակող Ռուսը նուստտ հաշտութիւն մը կընեն, թէ և տակաւին ասոր նշան մը չտեսնուիր ։

Ներկայ պատերազմն ուրիշներու չը նմանիր. քանզի ինչպէս արդէն ըսած էինք, Ռուսիա ազգային և կրօնական տանքութեամբ ձեռնարկած է ասոր իրեն համասեւ ժողովրդոց աղատութիւն վատարելու յոռտով, Ռուս ժողովուրդն, որուն ազգայնութեան տէր մասը պատերազմը քաջալերած էր, տակաւին կրնայ զոհողութիւններ ընել զայն շարունակելու համար. ուստի ջարդ մինչև որ իւր բոլոր զորութիւնը չլծախէ, չյուսադուր որ նուստտ հաշտութեան մը զինանի. մինչև ցարդ իւր բոլոր զինուորական զորութիւնը պատերազմի դաշտն իջուցած չէ, և տակաւին կրնայ զորք բերել տալ ։ Սեպտեմբ. Բէյլայի առջեւ կարելի եղածին չափ ոյժը թափեց, բայց տակաւին Ռուսիոյ մէջ կրնայ զինուորաբերութեամբ նոր զորութիւններ հաւաքել ։

Ստոյգ է որ Ռուսաց զինուորական կարգադրութիւնները խիստ պակասաւոր են, որոցմէ պէտք է զինուորական հրամանատարը զգուշանան ։ Եղած պատերազմներուն տանէն ինչն մէջ առաւելագոյն զորութեամբ չգլխավորեցին, այլ միշտ Օսմանցիներէն սակաւաթիւ գտնուեցան ։ Ս. յայնպիսի անհաւատութիւն մ'է որ Ռուսաց բարձր հրամանատարներուն պատիւ չբերեր. ուստի եթէ Ռուսիա պատերազմի ասպարէզն ունեցած զորքը չլրկնապատկէ, յաղթութեան հաւանականութիւնը չտեսնուիր ։ Բայց քանի մը հարիւր հազար զորաց աւելնալն ալ չկրնար պատերազմին ընթացքը փոխել, եթէ կազմակերպութիւնն ու հրամանատարութիւնն ալ չբարեկերպ ։ Պատրաստութիւնները կատարեալ չեն, ճակատամարտի տեղերն օգնութիւն չըրկելու եղանակը դանդաղ և անբաւական էր, այնպէս որ 1870 ին Գաղղիացաց զորավարներուն դործած սխալները Ռուս զորավարաց սխալներուն հետ բաղդատելով այնչէն են ։ Ռուսը ամրոցները պաշարմամբ առնելու համար մարաթիստ Մոլթիէի ցոյց տուած գիւրքին և ազատով եղանակը թողլով պատերազմն արաւ գապէս վերջացնելու յուսով խումբ խումբ զորքեր յարձակման զրկեցին ամբողջութեանց գէտ, և դանդաղ մեծ կորուստներու ենթակայ ըրին ։ Իրենց պարտութիւններուն մեծ մասը պատերազմը վերջացնելու համար ըրած շտապումներուն պատճառաւ է ։ Ասկէ դատ յարձակման և պաշտպանութեան մէջ իրենց շարժումները կատարեալ ներդաշնակութեամբ չեղան ։ Ս. յոսր Բէյլայի զորավարը բաւական յարձակմամբ Օսմանեան ամբողջութիւններէն մէկ երկուրը կ'առնու. բայց երբ Օսմանցիք իւր վրայ կը յարձակին, իւր ընկերակից Ռուս զորավարէ մ'օգնութիւն կուգէ, նա ալ օգնութիւնն այնչափ ուշ կը հասնէ, որ արդէն Ս. յոսր Բէյլայի յարձակման պարտաւորեալ էր ։

Գրիգորի զորավարն յարձակում մը կը հրամայէ, յարձակող զորքերն ամբողջութիւններէն վեր երնելու կաշնառին մեծ կորուստ տալով, բայց անոնց ետեւն օգնութիւն հասցնելու ։ Վերջապէս տեսնելով որ յետո կը նահանջեն հաղիւ կէսը ուղ մնացած, միայն երկու վաշտ օգնութիւն կը զրկէ նորէն յարձակելու հրաման տալով, մինչև գետ երկու գունդ ալ բաւական չէր, և այսպէս զորքն ընդունայն կը շարդուի ։

Սերվիա Բէյլայի պատերազմի վախճանին կ'ապաստէր գուցէ, եթէ Ռուսը յաղթող երնէին ինք ալ շարժելու համար, բայց հիւսիս հաւանական չլծուիր որ պատերազմի սկսի, թէ և պատրաստութիւնները կը շարունակէ ։ Տերութիւններէն ոմանք խորհուրդ տուին իրեն որ խաղաղութիւնը չլրդովէ. բայց ըստ ոմանց Միլան իշխանը զինուորական դաշնադրութիւն մը կընքէր Եւթիքէթ Բէյլայի հետ ։ Կըսուի նաև թէ Գերմանիա զինքը կը քաջալերէ. բայց այս նկատմամբ եղած զրոյցներն առ այժմ ստույգ չեն կրնար համարուիլ ։ Յունաստան ամեն ժամանակեւ աւելի խոհեմութեամբ կը շարժի ։

Ռուսիոյ նպատակը Թուրքիոյ քրքրիտանէից մէջ ապստամբութիւն գըրդուել էր, բայց մինչև ցարդ Պուլհարներէն և Պաշտըններէն զատ իրեն լազանքը կատարող չգտնուեցան ։ Հայերը Թուրքիոյ ամենէն խաղաղ և լաւ կարգ ժողովուրդն են ։ Օսմանեան կառավարութեան և Օսմանեան ազգին ամենէն աւելի յարեալ, քան զի երկու կողման մէջ միտնեան և հաշտադրութեան բաղմամբ պատճառներ կան ։ Հայերն երբեք տալը տամբութիւն հանած չեն, քաղաքական գիտութեամբ ինչպիսիք յարուցած չեն. բայց և այնպէս Ռուսը ջանացնէ Հայերն ալ կատկածելի ցուցնելով նախ Օսմանեան կառավարութեան և Հայոց մէջ եղած սերտ յարաբերութիւնները խղել, որպէս զի Հայերն աւելի գիւրաւ որ ըլլան իրենց ։ Հայաստանի կողմը գուցէ երկրակալութեան նպատակներ ալ ունենին, և ասոր համար իրենց բանակներուն վրայ մէկ երկու Հայ զորավար ալ կարգեցին ։ Հայոց աչքը շրջապընէ կարծելով, որպէս զի երբ ժամանակը գայ, իրենց շահատէր քաղաքականութիւնը գիւրաւ քաղցնեն ։ Բայց այս հաշիւները սխալ ելան. իրենց բանակներն յետո նահանջեցին. ուստի երկրակալութեան յոյսերն ալ անհետացած ըլլալու էին ։ Բայց կերկի որ Ռուսիոյ կուսակից Նուրա գիրք տակաւին աչքը բացած չէ իրականութիւնը տեսնելու համար, և մերթ ընդ մերթ սուտ Հայերու նամակներ կը հրատարակէ, որպէս զի Նուրա յոյսն թէ ահաւասիկ Հայերն

ալ գէտն են վեհ. յուրմանին կառավարութեան գէտ, և այսպէս ճանապարհ բանայ ինչ կարելի է որ մը Ռուսիոյ տիրապետութիւնն և Սլաւեան քաղաքակրթութիւնն անոնց վրայ տարածելու ։ Ռուսաստանը թերթերը կը ջանան մինչև իսկ սուտ Հայերու բերնէ նամակներ հրատարակելով մեր Ս. Պատրիարքին Սնգղիոյ գետնայն Պ. Լէյթերի ըսած խօսքերուն ազգայնութիւնը ցրել ։ Ս. յոսր քերքը պարունակող Պ. Լէյթերի նամակն անցեալները լրագրոյս մէջ հրատարակած էինք. Հայոց ազգն և իւր ընդհանուր ժողովը զայն կարգացին, և Ս. Պատրիարք հօր յայտարարութիւններն ամեն ճշմարիտ Հայոց հաւանութիւնն ստացան ։ Ռուսամուրթերը չկրցին տանիլ զայս, և ահաւասիկ շինծու նամակներ հրատարակելով Օսմանեան կառավարութեան և Հայոց մէջ որոմ սերմանելու և Ս. Պատրիարքն ազգին առջեւ կասկածելի ցուցնելու նենգամիտ փորձեր կընեն ։ Նուր և իւր համանամաներուն այս խաղաղ ընթացից գէտ արժան կը համարենք հրապարակաբար զորքեր և անոնց այսպիսի մեքենայութիւններն հասարակաց կարծեաց առջեւ խայտառակել, որպէս զի Նուրա և բոլոր աշխարհ ալ զիմանայ որ Հայերը բնաւ չեն կրնար Ռուսիոյ գործը ըլլալ ի մեծ վնաս իրենց. այլ եթէ ցաւ մ'ալ ունենան, վեհ. Սլաւեանն բարեկամ կառավարութեան ուղղութեանը ներկայացնելով միմիայն անկէ և անոր արդարախոհ զգացումներէն կ'ապաստեն դարման և իրենց վիճակին բարեկրթումը ։

Լոնտոնայէն Մէմօրիալ Տիբոմաթիք լրագրին ուղղուած հետեւեալ առդեւըն ուղղութեան արժանի են ։

« Մեր արտաքին գործոց պաշտօնատան մէջ կը յուսան որ երկու պատերազմող ազգութիւնը, ուժաւաստ ըլլալով մեծ տէրութեան մը միջնորդութեանը պիտի կարծախն ։ Եթէ ներքին մարտը Պիսմարք իշխանին գիւմեն, « Կեցի », պիտի գուցէ Սնգղիոյ Թուրքիոյ, եթէ կուրեւ մեղ հետեւ ցընէ, մեք ալ քեզ Գերմանիոյ առաջին նախարարին (Պիսմարք) ձեռքը կը թողունք, երբեքի դաշնակցութեան և Գերմանիոյ ու Սլաւիոյ կայսերաց սերտ բարեկամութեան բոլոր հետեւանքներուն ձեռքը կը թողունք ։ Հաւատարմութեան մեղ, և մեք քու շահերդ կը պաշտպանենք ոտիսդ փառամարտութեան գէտ ։ Մեզ հետ կրնաս տակաւին ապրիլ իսկ առանց մեղ յախտեան պիտի ջնջուիս. — ընտրէ » ։

« Եթէ Թուրքիա ուղղակի Ռուսիոյ հետ հաշտութիւն կընքէ ուղէ, Սնգղիոյ կառավարութիւնը մտադիր է բուռն միջոցներու գիւմել, մինչև իսկ եղիպտոսը գրաւել, որպէս զի յիշեալ

ուղղակի հաշտութեան միջոցաւ վստ-
փորի եղբորաց վրայ Ռուսիոյ ձեռք
բերելիք ահագին զօրութեանը հա-
կախութիւնն է :

« Լորտ Տէրպիլ ինքզինք անհրա-
ժեշտ կը համարի թուրքիոյ . մանա-
ւանդ երբոր թուրքիա տրիւնաթա-
թաւ և վերալից գաւրս եղնէ պատե-
լազմէն :

« Երբ տեսնուի ահա որ դիւանագի-
տական ճակատամարտի մը ներկայ
պիտի գտնուինք , որոյ մէջ Անգլիոյ
և Ռուսիոյ պաշտօնագրերու և յիշա-
տակագրերու պատերազմ մը պիտի
մղեն իրարու դէմ » թուրքիոյ կրնա-
կին վրայ » :

Պէտքէն սեպտ. 14 թուով Գաղ-
ղիական Լաթաքիթ լրագրին գրուած
նամակ մը հետեւեալ տեղեկութիւնը
կուտայ Գերմանիոյ քաղաքականու-
թեան վրայ :

« Պաշտօնական թերթերն օր քան
զօր աւելի կը շեշտեն թէ բարեկա-
մական խօսքերէ տուելի տղաւ կեր-
պիւ օգնել հարկ է Ռուսիոյ :

« Յայնապէս կըսեն թէ միջոցներ
ձեռք կառնուի Ռուսիոյ արևմտեան
դաւառները գերմանական զօրք
մտցնելով պահպանելու , որպէս զի
Ռուսիոյ կառավարութիւնը կարող
ըլլայ իւր բոլոր զօրքն այն գաւառ-
ներէն հանելով պատերազմի զրկել :

« Եւ որպէս զի չկարծուի թէ ե-
րեք կայսերաց դաշնակցութիւնը
խղիւղ է , Աւստրիա ալ պիտի հրա-
ւիրուի հարաւային Ռուսիոյ քանի մը
դաւառները զօրք մտցնելով պահ-
պանել :

« Գերմանական կառավարութիւն-
նը թոյլտուութիւն չնորհեց զինուո-
րական բժշկաց , որ Ռուսիոյ բանակ-
ներուն մէջ ծառայութիւն յանձն
առնուն . հետեւաբար 150 էն աւելի
գերմանացի բժիշկ Պուքրէշ զընա-
ցին » :

Կարինէն սեպտ. 4/16 թուով հե-
տեւեալը կը գրեն Եւրոպական լրագ-
րաց :

« Ռուսաց դէպ Ալէքսանդրաբօլ
քաղաքէն հարկը Լորիս Մէլիքօֆ
զօրավարին մէկ ձախող արամադու-
թենէն յառաջ եկաւ , վասն զի իւր
ձեռքն ունեցած զօրաց մէկ մասը
Տէվէլ զօրավարին հետ Տէր Դուկա-
սօֆի օգնութեան զրկելէ հրաժարի
կողմը :

« Տէվէլ յաջողեցաւ թուրքերը կիր-
էներէն անդին ղշել և երեսնայ ճան-
բան գոցել անոնց առջև . բայց մին
չև որ նորէն Մէլիքօֆի բանակը դար-
ձաւ , Մուսթաֆա փաշայի գլխաւոր
զօրութիւնները գրաւեցին Ռուսաց
կողմի վրայ իշխող գիւրքերն (Գըղը
Թէվէլի բարձունքն) » որ մէկ վաշտ
զօրաց պահպանութեան յանձնուած
էր :

« Թուրքաց այս շարժումը Ռու-
սաց հաղորդակցութիւնները կտրե-
կապեն Սարահանը պարպելու
հարկադրեց զանոնք , և առ ձեռն
գտնուած զօրութեան յարձակողա-
կանի ձեռնարկելն անհնար ըրաւ :

« Այսօր Օպրուշէվ զօրավարն սպա-
յաժողովի զլուս անուանելով՝ կալ-
կասեան բանակը վերականգնելու ձեռ-
նարկած է , որոյ հրամանատարաց ա-
մենն ալ պիտի փոխուին » :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Օրինակէն եկած պաշտօնական
հեռագրերէն կը հասկնուի , թէ
Շէվրէթ փաշայի հրամանին ներքե
պատրաստուած զօրաբանակն՝ որ 45
վաշտ զօրքէ կը բաղկանայ , Բլէվա-
յի հետ յարաբերութիւնները պաշտ-

պանելու , Լոֆֆայի մէջ տարացեալ
Ռուսական զօրքը ներկիւ և Սօֆիա-
յի ճանաչան պահպանելու պիտի ծա-
ռայէ :

Լաթաքիթի մէջ կը կարգանք
թէ Բլէվայի մօտակայ կրիկիցա ա-
նուն ամբողջ իւրենն որ Ռուսաց ձեռքն
անցած է , ետ առնուած համար սեպտ.
12ին և 16ին եղաւ բուռն յարձա-
կաններուն մէջ՝ Լիվա Ուրալ Ահմէտ
փաշան երկու ռուսաց զարնուելով
մեռեր է , Յէրիգ Հասան փաշան և
Լիվա Ռիֆայթ փաշան ալ թեթեւ կեր-
պիւ վերաւորուեր են :

Պասիքէթ լրագրին առանց ուր-
կէ առած ըլլալն յայտնելու՝ կը ծա-
նուցանէ թէ Սիւլէյման փաշան Շիր-
կայի կիրճը կապրօվայի կողմէն ալ
պաշարելով , Ռուսաց հաղորդակցու-
թիւնը բոլորովին կարելի է , այնպէս
որ՝ Շիրկայի մէջ տարացեալ Ռուսա-
կան զօրքն այսօր վաղն տնձնատուր
ըլլալու հարկին մէջ կը գտնուի :

Երէկուրէն ի վեր զրոյց ելած է
թէ մեծ ահրաւրութեանց դեպքանե-
րէն մին Բ. Դրան հետ բանակցու-
թեան մասեր է՝ հասկնալու համար
թէ վեհ. Սուլթանին կառավարու-
թիւնն ինչ պայմաններով կը յօժարի
զինագողար ընդունել , եթէ առա-
ջարկուի իրենն :

Վաղըթ լրագրին խօսքին նայե-
լով Բ. Դուռը պատասխանել է թէ
թուրքիոյ անկախութիւնն ու ամբող-
ջութիւնն տապալուութեան ներքե
գնող պայմաններու վրայ հիմնեալ
զինագողար մը միայն կրնայ ընդու-
նել . ապա թէ ոչ՝ մինչև ցլետին
չունչ պատերազմը պիտի շարունակէ ,
մանաւանդ այս միջոցիս , ուր պարզ
զինագողար մ'ուրիշ բանի չծառա-
յիւր , եթէ ոչ ժամանակ տալու Ռուսի-
ոյ , որ իւր կորուստներուն տեղը լը-
ցնելով և նոր զօրութիւններ պատ-
րաստելով յառաջիկայ գարնան նո-
րէն յարձակում սկսի :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 23 սեպտ.
Պ. Կլաքթոն լրագրաց մէջ հրատա-
րուած նամակաւ մը սուտ կը հանէ յոյն
վաճառականի մը նամակ մը զրած և Յու-
նաստանի խրատ առած ըլլալն , որպէս
զի պատերազմ հրատարակէ թուրքիոյ դէմ
Անգլիոյ նախարարութեան բերան հա-
մարուած : Միջանորոք լրագրին յօդուած
մը հրատարակելով կը հաստատէ թէ թուր-
քիոյ ձեռք բերած նոր յաջողութիւններն
իրաւունք կուտան իրեն պահանջելու Եւ-
րոպական տէրութիւններէն որ պատե-
լազմին վերջ տրուի :

Բլէվայի առջին անգլիական լրագ-
րաց եկած տեղեկութիւնը կը ծանուցա-
նեն , թէ Թոթլիպէն զօրավարն անձամբ
պիտի տնօրինէ յիշեալ ամուր քաղաքին
պաշարման աշխատութիւնները :

Վիլհելմ 24 սեպտ.
Պուքրէշէն սեպտ. 22 թուով հետեւեալ
լուրերը կուտան տեղոյս լրագրաց :
Կայսրուհին մօտ օրերս հա պիտի գայ
համոզելու կայսրն՝ որ հեռագր. է՝ պա-
տերազմի թատրոն հեռանալու :

Կորպորալ իշխանը ծանուցադիր մ'ուղ-
ղել է Պ. Պրաթիանի , յորդորելով որ
Ռուսիոյ կառավարութիւնն հսկողու-
թիւն ընէ Ռուս ընկերութեանց և անոնց
Պուքրէշէ մէջ ունեցած լրտեսներուն վրայ :
Նոյալս Բուսիոյ , նոյալս և Ռուսիա-
նի մէջ հասարակաց կարծիքը խիստ վեր-
սեալ է , և ամեն մարդ գիտէ է՝ պա-
տերազմին անցքերէն :

Վիլհելմ 24 սեպտ.
Պիտարը իշխանը Լովկապուրի գնաց :
Զրոյց կայ թէ Ռուսիոյ կայսրը Կալի-
ցիա պիտի երթայ բնակելու :
Խնդրադիր մ'ուղղուեցաւ Լեհ երես-
փոխանաց , որպէս զի Լեհացոց հակա-

սըլաւեան զգայունքն երեսփոխանական
ժողովին յայտնեն :

Վիլհելմ 23 սեպտ.
Քոնէրօնտոն Ռիլիթ լրագրը Պուք-
րէշէն հեռագիր մ'առած է ծանուցանող
թէ Թուրքերը Ռուսիոյ հողին մէջ ա-
մուր դիրք մը ձեռք ձգելու են հանդէպ
Ալիսթիլի :

Ռուսաց կայսերական զօրաբանակէն
երեք բաժին Պիլլա հասնելով , երկուքը
Բլէվայի վրայ , մին ալ Նանթրայի վրայ
զրկուեցան . իսկ հեծեալազօրը գրեթէ առ-
բողջապէս Թրիօլա կերթայ :

Լոնտոն 26 սեպտ.
Տէյլի Նիւս լրագրը Բեդրապուրիէն
հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող
թէ նախարարաց խորհուրդը խաղաղու-
թեան և պատերազմի խնդրոյն վրայ վի-
ճարաներ է : Կոստանդին Մեծ դուքսն և
պատերազմական դործոց նախարար Մի-
լուէին զօրապետը պատերազմը շարու-
նակելու կողմն են , իսկ միւս նախարարը
խաղաղական բանակցութեանց մտնելու
կարծիք տուեր են :

Պէտքէն 26 սեպտ.
Նախարարաց խորհուրդը նախագահ Պ.
Սթէվիլ և հասարակային դործոց նախա-
րար Պ. Միլայիլովիչ Մարիէնպատէն վե-
րադառնալով և իրենց պաշտօնը շարու-
նակել սկսան :

Լոնտոն 26 սեպտ.

Օսմ. Բոնա.	9 7/8
Փոթ.	1865 40 1/2
»	1869 9 7/8
»	1871 38 3/4
»	1872 47 1/2
»	1873 9 3/4
Եղիպտ.	59 3/8
Անգլ. Բոնա.	95 9/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան վէպիթէ (Հադիթէթ)
լրագրին հետեւեալ յօդուածն Հայ
տիկնանց ուշադրութեանը կը ներկա-
յայնենք :

« Քանիցս անգամ հասարակու-
թեան առատասիրտ զգայմանցն հը-
րաւէր կարգացինք ի նպաստ մեր
պատերազմող բանակին վերաւորե-
լոց , և շնորհակալութեամբ տեսնեք
որ մեր այն հրաւերներն առանց ար-
ձագանգի չէին մնացած : Բայց թրշ-
նամիդն երկաթէն դարձնող մեր քաջ
զօրականաց օգնութեան հասնելու
փութումը անդու կուրծներէն պէտ-
քերը մեծապէս աւելցան , գլխաւոր-
ապէս ծուտի (Թիֆլիս) պէտքն ,
որ ամենէն հարկաւոր նիւթն է զօ-
րաց վերքերը դարմանելու համար :

« Անշուշտ կառավարութիւնը կըր-
նայ ու զուտ լին չափ ծուտ գնել դուր-
սէն , բայց տեսնուեցաւ որ այն փա-
ճառուած ծուտը լուս նիւթերէ և
խնամք չլինած չըլլալով , հրադի-
նուց պատճառած վիրաց փափուկ
դարմանին պահանջած մաքրութեան
պայմանները չունի :

« Իսկ ընտանեաց ձեռքէն ելած
ծուտն՝ ամեն բաղձացեալ պայման-
ներն ունենալով , խիստ դժբաղդեղ
արդիւնք կունենայ միշտ . և որով-
հետեւ ինքիքը մարդկային կենաց
վրայ ըլլալով խիստ մեծ կորուստու-
թիւն ունի , պարտք համարեցանք
անդամ մ'ալ ձայն բարձրացնել դը-
թափրտ անձանց հաւատարմութե
ծուտի նուէրը խորին շնորհակալու-
թեամբ պիտի ընդունուի :

« Գլխաւորապէս տիկնանց կը դի-
մենք , որոց փափուկ և գլխադարձով
սիրտը միշտ կը կարեկցի ցաւոյ :

« Բաղձաթիւ տիկնայք , մեծ մասն
օտարազգի , մեր վերաւորելոց ցոյց
տուած հոգածութեամբ նշանաւոր
հանդիսացան . անոնց անուանքն ա-
ռաջին տեղը կը բռնեն նուիրատուաց
ցոյցակին մէջ : Լրագրաց մէջ հըրա-
տարակեալ ցոյցները վկայ են անոնց
մարդասիրութեանը բայց երկու կամ
երեք պատուաւոր բացառութիւններ
մէկ կողմ առնելով , ցաւօք սրտի կը

պարտաւորինք յայտնել թէ մեր քը-
րիստոնեայ հայրենակիցները , Հայ ,
Յոյն կամ Հրեայ , այս աշխիւ օրինա-
կին չեն հետեւած . մեր անկեղծու-
թիւնը պարտք կը դնէ մեր վրայ այս
պարագա նշանակել , համոզուած ըլլա-
լով որ մեր քրիստոնեայ տիկնանց
այս մարդասիրական գործէն ետ կե-
նան անտարբերութեան կամ դժ-
կամակութեան պատճառաւ չէ , ո-
րովհետեւ շատ պարագայից մէջ՝ տա-
ռապեալ մարդկութեան վրայ իրենց
ունեցած առատասիրտութեամբն ու
հոգատարութեամբն նշանաւոր եղած
են :

« Կաղաչենք նաեւ մեր տեղական
պաշտօնակցաց , որ մեզ հետ միա-
նալով ջանք հրաւեր մ'ընեն մեր քը-
րիստոնեայ հայրենակից տիկնանց ,
որք անշուշտ կը փութան արեւելեան
կենաց պարտաւոր երկար ժամերէն ա-
մեն օր քանի մը վայրկեան ծուտ
չինելու նոյնիսկ իրենց գեղեցիկ մատ-
ներով , առաջին կարգի մարդասի-
րական նպատակի մը համար » :

Կարնոյ կուսակալ խմբիլ Հագգի
փաշան սեպտ. 2 թուով լուր կուտայ
թէ Ռուսաց բանակին մէջ գնդապե-
տի աստիճան ունեցող Ե. Կալապալի
որդի ճաֆէր աղա՝ որ Երեւանայ ե-
րեւելիներէն մին է , իւր և վեց հա-
րիւր ալ ուրիշ ընտանիք հետն ա-
ռած Օսմանեան բանակը դիմել և
թուրքիոյ մէջ բնակութիւն հաստա-
տելու խնդիր տուեր է :

Խմբիլ փաշան ալ սիրով ընդու-
նեւ է յիշեալ գաղթականներն և ա-
նոնց բնակութեան յարմար տեղեր
և միջոցներ տուեր է :

Դաղդիական Կարմիր խաչի ընկե-
րութեան նախագահ Նըմուրի դուք-
սըն (վախճանեալ Լուի Ֆիլիպ Թա-
գաւորին որդին) , Օսմանեան Կարմիր
Մահիկին նախագահ Արիֆ պէյին
հրաւիրանաց պատասխանելով կըծա-
նուցանէ թէ ընկերութեան տնօրէն
գլխաւոր քսան հաղար ֆրանքի ար-
ժողութեամբ վրաններ , վերմակներ ,
սաւաններ , վիրաբուժական գործի-
ներ , վերք պատելու կտաններ և այլն
զրկել օրոշեր է :

Կ. Պոլսոյ երեսփոխանական ընտ-
րութիւնը Պայրամէն ետեւ պիտի կա-
տարուին :

Հայազգի հացագործ մը , Մելքոն
անուն , որ ամեն օր թարապակէն
Գալաթի հաց կը տանել իւր յաճա-
խողաց , երէկ առաւօտ Սարբերաթն
Գալաթի երթալու ճանապարհէն վրայ սպան-
նուած ու կողոպտուած գտնուեցաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
14 սեպտ. երկուշաբթի իրիւն	40.20
15 սեպտ. երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	40.20
ժամ 6 ին	40.26
Բուսնիկ երկաթուղի	Ֆր. 31 50
Թղթաղարմ	Լր. 184 1/2
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵՊԹՈՅ	
Կ. Պոլսի 14 Սեպտեմբեր	
Սոսիթի ձեռնարկ բաժ. Անգլ. լր. 3, 5	
» ֆոթոանկալութեան »	1.25
Կ. Պոլսոյ Պանքային »	2.28
Քրէտի ձեռնարկ »	2.
Քրէտի Օսթրո-Թուրք »	-
Փոթ. 1863	Ֆր. 52
» 1865 »	53
» 1869 »	49 20
» 1872 »	47
» 1873 »	48
Թրամուայ	Օսմ. լր. 1 74

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՀԱՄԻԼԻ ԱՌԱՋԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՍ
Ազգային ժողովը նիստ ունի յա-

առաջինը ուրախութեամբ սեպտ. 16-ին Մոյր եկեղեցիի Գումարում :

Ասանը պիտի բացուի ճիշդ ժամ 6-ին և գոյուի 10-ին :

Հրաւիրեալ են երեսփոխան Է. Ֆէնտիները՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալով :

13 սեպտ. 1877
ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պօլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՕԼՍՈՅ
ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

ՕՐԱՅԱՐԻ

1. Ընտրութիւն Դատական մասնա-
ժողովի .
2. Պիւտճէ կեդր. սնուակի .
3. Հրահանգ բարեկարգութեան ազ-
գային վարժարանաց :

Ատենադպիր
Հ. Ս. ԱՆՃԱՆԷ

Սոյն հրաւիրուելիս այս առա-
ւատ ժամ կին բերուեցաւ մեզ հրա-
տարակութեան համար . իսկ իբրեւ
երեսփոխան առ մեզ գալիք հրաւի-
րագիրը մինչև այս վայրկեանս (ժամ
6) չէ եկած , և կը բռնը թէ ուրիշ
երեսփոխանաց ալ երեկ իրիկուն և
սոյսօր երթալ սկսեցին :

Տասն և հինգ օրն անգամ մը դու-
մարուելիք ժողովոյ մը հրաւիրողը
ըրբև՝ փոխանակ գտնէ երկու օր առաջ
զրկուելու ըստ կանոնի , և լրագրաց ալ
գտնէ երեք օր առաջ տրուելու՝ այս-
պէս ուշ թողուիլ հարկաւ առանց
նպատակի չկրնար ըլլալ , և մեք ի-
րաւունք կունենանք կասկածելու թէ
նպատակն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ սա
թէ երեսփոխանաց մեծ մասը , մա-
նաւանդ յառաջգլխականք , որք ամբ
բան պատճառաւ գիւղերը կը գտնը-
ուին , հրաւիրողը ժամանակին չըս-
տանալով , չկրնան գալ ի ժողով , և
ասպարէզը Ղալաթիոյ խմբակին մը-
նալով՝ ուղած խաղն անարգել կարե-
նայ խաղալ :

Այս կանոնադրանքովեան բա-
ցատրութիւնն հարկաւ փաղը պիտի
ուզուի գիւտնէն :

Իսկ մեք , ինքզոյն պաշտօնական
ըսածով միտքուն թողալով , կը յոր-
դորենք Յառաջգլխական միութեան
Մեծ . սնդամներն որ վաղն առանց
զանցառութեան ի ժողով գտն , և ե-
թէ ինչպէս որ իրաւամբ կը կասկա-
ծինք՝ պատրաստեալ խաղ մը կայ ,
իրենց ստուար մեծամասնութեամբ
ի գերեւ հանեն :

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՆԻ

Օրաւարդ — Դատարարութիւն :

Ազնիւ Մարիս .

Կարեւորութիւն ունեցող միջանկեալ
խնդրոց պատճառաւ դատարարական
յոյուածներս պահ մը ընդհատել ետեւ՝
ձեռք կտանում վերադառնալ , որ ինչպէս կը
անմահն Նէքորի , ըլլալով կամ չըլլալով
խնդիր է :

Դատարարական վերջին յոյուա-
ծոյս մէջ ըսի թէ մասնաւոր վարժարան-
ներն հանրային օգտակարութեան հետի
են :

Փութամ արդ իմ հակադրութեանս
փաստերն յառաջ բերելու :

Մեր ազգային վարժարանաց հասցի
գլխաւոր աղբիւրներն են եկեղեցեաց օրն-
տուկներն և համեստ կարողութեան տէր
ծնողաց թղտակները :

Երբ կարողութեան տէր ծնողաց դա-
կընքը մասնաւոր վարժարաններ յաճա-
խեն , մեր ազգային վարժարանաց հա-
սցիթի գլխաւոր աղբիւրներէն մին կը
ցամբի :

Սոյն տեսութիւնը խնդրոյն միայն նիւ-
թական կողմը կը շօշալի :

Կանցիլի բարդական կողմին :

Եթէ կարողութեան տէր ծնողաց դա-
կընքը միայն կանոնաւոր կը թողնեն

ստանան և ազգային կամ գիւղացեայ
դասիկն կրթութիւնը ուղարկութեան և
հոգածութեան առարկայ լինելէ՝ զազբի ,
ազգին մէկ մասը միայն կրթութեան կը լի-
նին :

Մեզի ոչ աքճեալն է ազգը կրթել :
Ազգի մը ընդհանրութիւնը ազգային
հոգած կամ որ ճիշդն է ազգային դաս-
տարարութեամբ կրթութեան լինելու հա-
մար , հարուստ թէ ազգային դաս-
կընքը մէկ զբաղեցանք վրայ քովէ քով ,
մի և նոյն ուղղութեամբ և մէկ մէկ օտով
պէտք է դատարարական :

Երբ ասոր հակառակը պատահի և երբ
հարուստին դասին ազգային դասիկն
տարբեր կրթութիւն ստանայ , կամ ա-
ռաջինը յատուկ և մասնաւոր ուղղու-
թեամբ կրթուի , և վերջինն առ ի չըզոյշ
նիւթականի՝ կանոնաւոր դատարարակա-
թեան զրկուի , ազգն իր բուն նպատա-
կին չհասնիր , և մեր Ազգ. վարժարան-
ներն ալ չեն կրնար ուղղուիլ :

Մասնաւոր ուղղութեան արժանի
կէտ մ'է այս :

Ինչ պէտք է ընել ուրեմն՝ որպէս զի
ազգային դատարարութիւնն հանրա-
նայ և ազգին հաւատարմաց կրթուի :

Մեր թաղային մատարարութեան
արդի դրութիւնն ու վարժարանաց ըն-
թացքը պէտք է փոխել :

Առանց ընդարձակ կերպիւ խօսելու ,
կրնամ , պէտք է ժամ առաջ ազգային
դատարարութեան կանոնաւոր ուղղու-
թիւն մը գծել . մերձաւոր թաղերու վար-
ժարանաց միտքովը պարտաւորել ընել
և թաղային ժողովը հաստատութեան
խնդիրը լուծել : Այս վերջինը մեծ կա-
րեւորութիւն ունի վարժարանաց յարատեւ
բարեկարգութեան ապահովելու մասին :

Կը մնայ խնդիրը դրական : Կրնան թէ
դրամ չկայ . ես այդ կարծիքն չեմ .
դրամ կայ , սակայն հաւաքելու և զայն
արդիւնաւորապէս մատակարարելու մի-
ջոցներ չկան կամ թերի են :

Ուստի ո՛ր կողմ դառնանք , խնդիրը
դրութեան վրայ է :

Արդի դրութեան անբաւականութիւն
նրն երկար փորձերով տեսնել ետեւ՝ զայն
ամբողջովը բռնելու [և օգտակարութիւնը
ձանդաղած կամ աւելի հաւանական թուած
մէկ ուրիշ դրութիւն մը հաստատել չու-
զելը չեմ գիտեր ինչ կը նշանակէ , ինչ
զաղտոյից կայ , և սրտիկն նկատումներ
զմեզ կը նախապաշարեն :

Ինչ ըսեմ՝ Սահմ. վերադնշութիւնն
առ այժմ առ կայ թողելու համար Հայ
Կրեւնագիրին՝ Ստեփան փառայի՝ ըրած
առաջարկութեան , ինչպէս մեկնեմ :

Այս խնդիրը պատեհ առթի թողով ,
կը գտնեմ օրակարգին :

Իրենց դաւանքը մասնաւոր վարժա-
րանները զրկուելու մեղադրանքն չեմ կըր-
նար խաղաղ ազատ համարիլ :

Իրաց ներկայ վիճակին մէջ նոցա մեր
ազգային վարժարաններէն զանգատին
խառնել է , բայց ձեռք առած միջոցներն
միայն իրենց բարիքը մտածելէ անդին
չանցնիր :

« Ամեն մարդ իրեն և Աստուած ա-
մենուն համար » ի պիղքուք է այս , որ
հանրական գործոց չկրնար յարմարիլ :

Հանրական գործերն ընկերութեամբ
կը գործուին :

Եթէ ընկերութեան ոյժը չկայ զա-
նազան պատճառներով , հանրութեան
գործերը կը կազմեն , և օրքան զօր վատ-
թարանալու երես կը բռնեն :

Եթէ կարողութեան տէր ծնողք՝ փու-
խանակ միայն իրենց օգտին համար մա-
նաւոր վարժարանաց ստատը լինելու ,
որոց օգուտը մասնաւոր է , փախան և
ազգային վարժարանաց բարեկարգու-
թեանը նուրբն իրենց ուղղութիւնը ,
կըսեմ թէ հանրական բարիք մը գործած-
կը լինին :

Եթէ այսպէս վարուին , ոյր վասն ի-
րենց ազգասիրութեամբ հրաւիր կը կար-
գում , ուրախ ազգային դասիկն արաւ-
դային երեւելի մարդիկ պիտի լինին , և
սրճառի նշանաւոր հանձարներ պիտի փայ-
լին , որք անձանօթ մնացած են :

Երբ ասանց վրայ կը մտածեմ , և երբ
ազգային զգացմամբ հանրութեան օգտին
վրայ խորհող և գործողներու թիւն յոյժ
նուազ կը գտնեմ , սիրտս ցաւով կը լցուի :

Ահ , ինչ անտեսելի բան է զգալ և
զգացածը չկրնալ բացատրել :

* * *

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԿՐՈՅ

Պարտականութիւն Գումարէժ քաղաքէն
արժ անայտրգ. բարեկամ մը հետեւ-
նայ նամակը գրկած է . որ խիտ կա-
րն որ անգիւղ թիւններ կը պարտա-
նակէ :

. . . Խնդրադրաւ Տէր .

Քանի մը տարի առաջ տեղացի և Պօ-
սեցի վաճառական ուսումնասիր ազգա-
յինը կանոնաւոր վարժարանի մը պէտքն
զգալով , ընկերութիւն մը կազմեցին , 4000
ոսկի դրամով ինչպէս ինչպէս և դա-
նազան ուսմանց և գիտութեանց յաճու-
ղակ դատաստաններ այլ և այլ տեղերէ բե-
րել տալով վարժարանը հաստատեցին ,
ուր բաւական թուով Հայ աշակերտք օ-
րինաւոր դատարարութիւն կ'ստանան
և ազգային ուղով կը սնանին :

Սոյն կարեւոր հաստատութեան քաջա-
ւոր և հիմնադիր հանգիստացած են Գեր .
Տ. Անդրէաս Ս. Արքեպիսկոպոս՝ առաջ-
նորը վիճակին . Կ. Պօսեցի վաճառական
Մեծ . Յովակիմ Էֆէնյան Գերբաւան որ
230 ոսկի նուիրած է , Ա. Նազարպէկ-
եան 500 , Ա. Վարդանեան 300 , Ս.
Թումանեան 300 , Ա. Գարապէկոյ 130 ,
Ս. Տ. Օհանեան 100 և Պօսեցի վաճա-
ռական Հանեան Յակոբ Էֆէնյան 23 ոսկի :

Սոյն պատուարժան անձինք վարժա-
րանիս հոգարարութեան պաշտօնը կը
վարեն , և յիշեալ ազգուստ հաստա-
տութիւնը կազմաւորելէ դատ՝ Հանեան
Յակոբ Էֆէնյանի Գանիւքն ու յորդորմամբ
ազգային ընկերացարան մ'ալ հաստատած
են , որ 2000 օրինակի չափ զանազան
գրքեր ունի և այլ և այլ լեզուէ լրագրի-
ներ կ'ստանայ :

Սոյն ընկերացարանին առաջին անգամ
100 օրինակ բնորդ գրեան և մէկ ձեռք
աշխարհացոյց տախտակ նուիրած է Յի-
նէրճեան Յովակիմ Էֆէնյանին :

Սակայն ինչպէս ամեն Հոմեր իր Զո-
յին և ամեն գեղեցիկ բան իր տեղը
կոչմն ունի , այսպէս ալ մեր վարժարանն
ու ընկերացարանն իրենց հակառակույն ու
թշնամիներն ունեցան , որոց զլրատորներն
են Տատուր խան , Տ. Յովակի քահանայ
և Մկրտիչ Յովակեան , որք անգաղար նա-
ցա կործանմանը կ'աշխատին և զանազան
փառ միջոցներ ու մեղեկացութիւններ ի
գործ կը դնեն :

Յիշեալ Տատուր խանը վարժարանին
Հայկարանութեան դատաստ արդոյ Պ.
Մեկերեանը որ Տիկիտեցի է և երբեմն
Մշակ չարախախտութիւնն օգնական խմբա-
զին , ո՛ր է միջոցով մը տեղական կա-
ռավարութեան ձեռք յանձնարձ հեռա-
յրնել տուաւ , որուն համար ժողովուրդն
իրաւամբ վրադած է . վասն զի յիշեալ
դատաստն մեծ յաջողութեամբ կ'աշխատէ , և
ոանդով և արդիւնաւոր եղանակաւ կը
վարէ իր փառնիկ պաշտօնն և հասարա-
կաց յարգն ու համարումը գրաւած է :

Վիճակին Գեր . Ս. առաջնորդը՝ որ Ս.
Կաթողիկոսին հրաւիրմամբ բաւական ա-
տենէ ի վեր բացակայ կը գտնուէր , անց-
եալներն իր պաշտօնատեղին վերադառ-
նալով , ընդհանուր ժողով կազմեց ազ-
գային ինչ ինչ գործոց կարգադրութեան
համար . և որովհետեւ պատուարժան հո-
գարարութեան պաշտօնին ծանակեալ
լրացած և հրաւիրական տուած էր , ժո-
ղովն ընդհանուր հաւանութեամբ յիշեալ
հոգարարութեանը մեկնեցաւ :

Ասոր վրայ Տատուր խան յանձնարինս
զաջրացած՝ ըստ որում իր և իր մէկ քա-
նի արբանեկաց ձեռքը կողմը անցունել
յիշեալ կարեւոր պաշտօնը , որպէս զի մօ-
ակն կարեւոր իւր գիտմանն ու չար նը-
պատակն զիւրաւ հոսնիլ ստատիկ կըլիք
և սարսաղութեամբ մեկնեցաւ :

Սոյն սարսաղութեան և անարգանաց վը-
րայ Գեր . Ս. առաջնորդն ու ժողովուրդն
իրաւամբ որոմոմած են , և կը յուսացուի
որ հաստա միջոցներ ազգովն ձեռք առ-
նուին :

. . . Տէր , խմբագրապետ , ներքեցէ
որ կարեւոր տեղեկութիւն մ'ալ աւելցնեմ
Գարապէտ Գալիքի մօտահանող մ'է :

ուր բաւական թուով Հայեր կան գոր-
ծունեաց ազգասէր և ըստ բաւականին
նիւթական կարողութեան տէր , բայց ա-
սանք ըստ ամենայնի Պարսիկ խաներուն
ճնշմանն ու բռնութեանց ներքեւ կը գըտ-
նուին և իրենց վիճակը գրեթէ անդադար
հարստահարութեանց ենթակայ է :

Սակայն կը յուսամք որ Վեհ. Դատին
կառավարութիւնն իր հաւատարիմ ժողո-
վրդեան վիճակն ուղղութեան առնը-
լով , կը բարեհաճի անյատաղ զարժանն
ի գործ դնել յօդուտ և ի լինութիւն տա-
րաւոր Հայոց :

Կ. Պօսեցի Ամենապատիւ Ս. Պատրի-
արքն , որ տեղեւոյ Պարսիկան Վեհ. Դատին
դեսպանին յարգն ու համարումը գրաւ-
ած է , եթէ բարեհաճի Տատուր խանի
ազգեցութիւնը բեկանել , յօդուտ Հա-
յազգի ժողովրդեան մեծ բարիք մ'ըրած
կը լինի :

Յիշեալ անձը ինչ շատ Յիշեալ Գեր .
վակիմ Էֆէնյանին կ'անձնած էր և նորա
ներկայութեանը չէր կրնար չարիք մը գոր-
ծել . բայց զժողովուրդար յիշեալ Էֆէն-
յան այժմ մայրաքաղաքը կը գտնուի ,
ուսկից կրնար մանրամասն տեղեկութիւն
ստանալ Տատուր խանին ընթացիկ վրայոյ :

Սոյն անձն իր կամօք վարժարանին
հաստատութեան համար 30 ոսկի ըստ
բաղրուած էր , զոր ցարդ չէ վճարած և
վճարելու ալ միտք չունի :

Այս պարագան զիտմամբ յիշեցի ,
որպէս զի չկարծուի թէ Ազգին օգուտ մը
ունի՝ բայց ի վնասէն . Ազգովն գո՛ւ իմ-
անք իրմէ՝ եթէ վնաս ու չարիք հասցը-
նելէ դադրի :

Խմբագրապետ Տէր , եթէ բարեհա-
ճիք հրատարակել ներկայս , կը խոստա-
նամ Ձեզի չարութեան տեղեկութիւններ
հազարդել :

Բարեհաճեցէք ընդունիլ . . . Տէր ,
այս առթիւ իմ անկեղծ զգացմանցս հա-
ւատովը : Միամ խորին յարգանք
1877 օգոստ. 9
ի Գալիքի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ն Ա Ս Ն Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-
ԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի պէրս նախընթաց քառասուն Ազգ. վարժարանաց

Կ Ր Թ Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-
ԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի պէրս շարքաւոր քառասուն Ազգ. վարժարանաց

ՅՈՐԴԵՆԵԱՅ

Տ. Խորէն ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԵՅ

Առաջարկութեամբ և վաւերացմամբ

Ազգային Կրեւնագր. Ժողովոյ

Տաղաքեալ հրամանաւ

Տ. ՆԵՐՍԵՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՕԼՍՈՅ

Կը ծախուի ամեն գրաւաճառաց խա-
նութիւններն ի գին՝
Նախնական Քրիստոնէական 30 սանդիւմ
Կրթական Քրիստոնէական 80 սանդիւմ :
Կեդրոնական Քրիստոնէական 40 սանդիւմ :
Չաղմագճըլար . Յակոբեան խան թիւ 15 :
Գոյրցաց համար մեծ քանակութեամբ
գնուելու հարկերն 10 զեղչ պիտի ըլ-
լայ :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ր Ե Ի Ք

Քրիստոնէաւ , Մամ Սիւրբայ , Ճաւ ,
Այլ և այլ , Յաւելու :

Հեղինակն իւր ինչ ինչ ոտանուոր
և արձակ գրուածներն և Լամարգինի
Գաղղիացի բանաստեղծին Սիւրբայ
Ճաւն գրաւար տաղաչափեալ թարգ-
մանութիւնն ամբողջած է սոյն զը-
քուկին մէջ :

Կը ծախուի Եֆէն-ճամի Զիւնիկի-
լէր ճատտէթի թիւ 2 , Ս. Ղ. և Եղ-
մանեան գրատուներ , և ուրիշ զըբա-
վաճառաց քով :

Ի թիւ 1 քառանկոյ թուղթ

A detailed line drawing of a four-poster bed. The bed features a high headboard and footboard, both constructed from a lattice of vertical and horizontal bars. The headboard and footboard are further decorated with a central cross-shaped lattice pattern. The bed is supported by four ornate, turned posts. The mattress is depicted with a woven or quilted pattern. The entire illustration is rendered in a classic, engraved style with fine lines and cross-hatching for shading.



3 15 Իսկ Գուգի. Պէյլէր. Չէնկէք. Վանիք. Գանարլլի, 25
 Ա. Հիսար, Գանլ, Բաշապ. Պէյքօղ :
 (Ուրրաթ օրերը Բ. փաշա մահաւ.)
 9 40 Գուգի Գ. Պէյլ. Չէնկ. Վանիքէօյ. (Բացի ուրրաթէ.) 25
 10 30 Գուգի. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, 33
 Գանլ. Բ. փաշա մահ. Բաշ. Պէյքօղ, թարապ. Պէօ
 յիւքմըմէ. (Ուրրաթ օրերը ժամը 10 1/2 կէն.)
 11 15 Գուգի. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար, 21
 Գանլ. Բաշապ. Պէյքօղ :
 11 40 Գապաթ. Գուգի. Պէյլ. Չէնկ. Վանիք. Պէյպէք : 22

աճախորդաց և այս քաղաքին ընդհանուր
նը գերադիշ ալ երկու ընկերութեանց մի-
այնինքին զրուցեան մը միջ կը դառնուի՝ և
զի բարձր խնամք կը մատուցեանք և
ներք կը բաղկանան երկու ընկերութեանց
այսպիս ապագովութեան և զիւրութեան
ելի մեծագուրմը ապահովութիւն բռնող և